ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի ապրիլի 10-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար տնտեսող լամպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 07.04.2023թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 10.04.2023թ. տրամադրված պարզաբանումները՝

1. <u>Հարցադրում</u>

«Հարգելի պատվիրատու՝ 8-րդ չափաբաժնի մասով ընդունելի է մասնակցել 14 վատանոց լամպերով, որոնց լուսային հոսքը կազմում է 110լմ/ՎՏ ? 9-րդ չափաբաժնի մասով ընդունելի է մասնակցել 88.8լմ/ՎՏ հզորություն ունեցող լամպերով ? Շնորհակալություն»

<u>Պարզաբանում</u>

«8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հիշյալ չափաբաժինների մասով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին:»

2. <u>Հարցադրում</u>

«Հարգելի պատվիրատու, 1-ին չափաբաժնում լուսատուի չափսը գրված է 60*60սմ, սակայն պետք է լինի 595*595մմ, ինչպես որ նշված է 2-րդ չափաբաժնում: Խնդրում եմ շտկել: Շնորհակալ եմ»

<u>Պարզաբանում</u>

«Հարցման հետ կապված հրավերում կկատարվի փոփոխություն՝ 1-ին չափաբաժնի մասով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում «60*60 սմ» պարամետրը կփոխարինվի «595*595 մմ» պարամետրով:»

3. <u>Հարցադրում</u>

«Բարի օր: 9-րդ չափաբաժնին կարող ենք մասնակցել թափանցիկ/Filament ԼԵԴ լամպերով? Տեխ. բնութագրը դրան չի հակասում: Խնդրում եմ պարզաբանել:»

<u>Պարզաբանում</u>

«9-րդ չափաբաժնի մասով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նման սահմանափակում չկա:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: